

Κωνσταντίνος Αὐγουστος εἶπεν, Εἰ ἄλλο ἐπαδεῖται Αὐγὰν οὐ δύναται, γινωσκέτω ἑαυτὸν φανερώς ἡττιμένον.

Δωὴκ λέγει, Σίλβεστρος ἐπηγγέλ-
λατο δικαίας αἰτίας ἔρεῖν, περὶ τοῦ
γενηθῆναι αὐτὸν, καὶ πειρασθῆναι
αὐτὸν ὑπὸ τοῦ διαδόλου, καὶ παθεῖν.
δίκαιον οὖν ἔστιν αὐτὸν ταῖς οἰκείαις
ὑποσχέσεσιν τὸ ἱκανὸν ποιῆσαι. Σίλ-
βεστρος ἔφη, Ἐπειδὴ οὖν ἀληθὴ τὰ
προφητευθέντα εἴρηκα, ὁμολογήσατε
ὅτι ἡ παρθένος συνέλαβεν; καὶ ἔτεκεν
τὴν Ἐμμανουήλ ὃ ἔστιν μεθ' ἡμῶν ὁ
Θεὸς; καὶ σιωπῶντος τοῦ Δωὴκ, Κων-
στατίνος ὁ βασιλεὺς εἶπεν. Οὐκ ἀπε-
σέγησεν Δωὴκ, εἰ ἐδύνατο τοῖς λεγο-
μένοις ἀντιστῆναι, ὅθεν γινωσκέτω
ἀληθὴ εἶναι τὰ λεγόμενα.

Այլ (եթէ) վասն այլոյ(յ) ուրաք,
արդ ցոյց, Ո՞վ է ծնեալ 'ի կուսէն
ընդ մեզ Աստուած. և կամ ո՞ր էլ
իշխան 'ի Բեդրա(հ)եմէ, որ հով-
ուէ զժողովուրդ զԻսրայէլ: Եւ կամ
ո՞վ է, որ 'ի վերայ(յ) յաւանակի նո-
րոյ(յ) էշու նստի և զայ յԵրուսաղէմ,
ըստ Զաքարիայ(յ) մարգարէին, ցոյց
զայլ դո:

Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 507)

230. ԱՐՅՐՆԱԳՈՅԳ. ԱՐՅՈՒ ԸՆԳՈՅԳ.

Ըստ Ար. Ծավղի մարի կամ Ծիւղի մայի, جوج, Գ. Noix Méteil. Ըստ
Ամիր. Կ'ըսուի « Էսպղ մարի, և Հնդկքն Թորոնանար կ'ասեն. և ինքն երկու
» ցեղ կու լինի. մէկ ցեղն է Ծավղ բի-Ղայը, جوج القى, և մէկ ցեղն է վերայ փուշ
» ունի, որպէս փայտի խարտուց կու նմանի փուշն, և ապրտաւ այլ կու լինի. և
» իր միջին հատն մեծ է քան զՊատնանին հոնտն և քան զԼուֆահի (Լուֆ?,
» Նուիկ) մանր է և դեղնաբար է, և մէջն է լիկ հունտ է, և կեղեւն նոսր է, և
» գլուխն նման է Պատնանանի և Լուֆայի. և մեծութիւնն Ընկղղի չափ է. և
» թէ մէկ կուտ յիրմէն ուտեն՝ ըղեղին զեն առնէ և հարբեցընէ. մէկ տէնկն և
» մէկ դրամն սպանանէ և մէկ օրն քուն անէ, և փողել տայ և թմրեցընէ. և
» իր դեղն այն է՝ որ փողեն, և այն: Եւ գիտացիր որ Թ. Թարոնայ ասեն »:
Ըստ այսմ և Լ. Datula Stramonium.

Վերոյգրեալ արարերէն Ղայը կամ Գայի անուանեալ Ընգոյզն՝ փսխեցուցիւն է,
Փ. Noix vomique. որոյ համար Կ'ըսէ Ամիրտ. Թէ կոչի և « Ծավղի ֆուսար.
» ինքն ընկուզ-մն է՝ որ մեծութիւնն կաղինի մի չափ է. և լաւն այն է որ ամուր

« լինի և մեծ... փոխեցընող է... և իր տալուն չափն՝ կէս տրամ է »։ Ուրիշ բժշկարան մ'ալ կ'ըսէ Եղեմիէն մեծութեանն համար, « Ինքն բարձր թուի է, և » հնար թունն փշփշուտ »։ Պէշթար ալ մարդաշափ մի է կ'ըսէ Արշնգուզենոյ բարձրութիւնն։

231. Արջի հատ.

Այսպէս կ'անուանէ բառագիրք մի Լ. Mélépyrum. փ. Mélépyre կոչուածը, որ յունարէն բառիւ Սեւ ցորեան նշանակէ։ Հասարակ դաշտային ցորենի նման հասկաձեւ խոտեր են, անոր համար և կ'անուանին ի բուսաբանից ածուոց կամ մարգաց, Arvense, Pratense. — Կու յիշուի ի Հայս Տայոց կողմերում, բայց ուրիշ կողմեր ալ պէտք է ըլլայ։

232. Արջխնդեղնի.

Ծառ. կամ թուփ, Նուխոյ կողմերը յիշուի յօրագրի. (Մեղու, ԻԲ, 83)։

233. Արջմրջմի.

Արածայր տերեւներով թուփ մի, ծանօթ ի Խոտուշուր։

234. Արջնի.

Վայրենի Զողալենոյ նման կամ տեսակ մի պտղատու ծառ։

235. Արջու խաղող.

Ըստ Ար. Իննայ հտ-սոսպ կամ Իննայ իւշ-տիւպպ. զոր Ամիրտ. գրէ Եանայ ըլ տեպ կամ տռռմ. Լ. ալ նոյնանիչ Մրս Մրսի. փ. Raisain d'ours կամ Basseroles. « Արջու խաղողն, որ Թ. Զիլակ ասէ, և կոթով կու լինի, և մարգու չափ եր. » կայնութիւն ունի. և տերեւն նման է Նռան տերեւին. և ի մրգին մէջն մանր » կուտ ունի չորս կամ հինգ հատ։ Եւ թէ ուտեն՝ օգտէ լուծման և արիւն » թքենլուն. փորձած է »։ Այսպէս ըստ Ամիրտ։

236. Արջտակ. Արջատակ.

Աւելի զուտ հայերէն կոչուի թաղթ. ըստ տեսակին՝ Վայրի Շաղգամ, կամ Շողգամակ՝ բողբոյսի ձեւին պատճառաւ. յունական բառիւ Κυλάμνος կոչուի, ի Լ. Cylamen. փ. Cylame, (որ հայերէն անուանն ալ նման է). ինչպէս մեր մէկ բժշկարանն ալ կ'ըսէ. « Ինքն բողբոյս զէտ Շողգամակ է, և գունն ծիրանի լինի »։ Ուրիշ մ'ալ. « Խոտ մի կայ Արջատակ ասեն. տերեւն զինչ Մանուշակի, և տակն » զինչ Շողգամակի, և ծաղիկն կարմիր է »։ Առաջինն այս անունն զուգէ Արտանիստ յոյն անուան, որ և փոխուած է ի Լ. Arthanita. Այս հասարակ և անխորհրդ անուանց հետ՝ Արօրք շնորհաւոր անուն մի տան զոր մեր բժշկարանք այլ յիշեն. « Արտանիստ, որ է Պոլիստի Մարիամն (Ռուբեն Մարեմայ, Sam-

tus Mariæ) որ է Արլտակն »։ Անգիտաց անպէտն կ'աւելցընէ, « Որ Պ. Ղալ-
» դամախ Շարարի կու առէ. Թ. Տօնկուզ աղիւրդաղի » կամ այդդի (Խոզի ծընկի
ոսկր)։ բայց տարրեր տեսակ մի ցուցընէ, ըսելով. « Որ ինքն փուշ-մն է, որ
» բուրդն այնով կու լուանան, և լաւն այն է որ նոր լինի »։ — Ֆէհրէնկ ի
պարօկ բառարանի գրէ. « Եփդիմէք. է արմատ ինչ նման Դողգամի. Թ. Տէն-
կիզ Թօփալաղի »։ աւելցընենք որ տմանք ալ Էրի քօնունի կ'ըսեն. — Եստ տե-
սակ զեղոց և օգտից մէջ մէկն ալ այս է, ըստ մեր բժշկապետին, որ թէ անով
« Ոծես յայն տեղն » որ ի ցրտուն ճեղքեալ լինի, օգտէ. և լաւն այն է որ քիչ
մի մոմ խառնես ի հետն »։ — Արլտակն Գարնանային բուսոց ցեղէն է (Primu-
laceæ)։

Արլտակի մէկ տեսակն Ար. իրենց լեզուով Առիփաճանկ կ'անուանեն, Գաֆ
ըլ-ասատ, նոյնպէս և Լ. Leontopetalon. զայս ալ յիշէ մեր հեղինակն Ամասիացի,
Արտանիսա (Յարտանիսա գրելով) բառին ներքեւ. « Յ. (Արաբն) Գաֆ ըլ-ասատ
» տաէ, և Թ. Սլաւն այնպիսի. և ինքն խոտ-մն է որ մէկ թիզ երկայնութիւն ու-
» նի, և շատ ճգրբ ունի. և յամէն ճղի ծայր հանց որ ի Սիսեռ կու բուսնի,
» հնդեր ունի, և տերուն նման է կաղամբի տերեւին. և յամէն ամսնի մէջ
» երկու երեք հատ հունտ կ'ունենայ. և տակն սեւ կու լինի, և ի Դողգամի կու
» նմանի, և ի վարած արտերու մէջն կու լինի, և ի ցորենին մէջն այլ կու բուս-
» նի... Եւ թէ կապանին և զքթան կտաւնին լուանան այս խոտով » յիստակ
» առնէ և սպիտակ »։

237. Արփիլունց.

Ի գաւառս Պոնտոսի՝ Փիլունց կոչուած՝ բուսոց մէկ տեսակն է, որ լայն և բո-
լորի տերեւներուն համար ի Լ. Aspidium կոչուի, յոյն ասպիս ասոց բառէն,
որ նշանակէ մեր հայերէնի նմանաձայն Ապարը, որ է վահան։

238. Արտախոյր կամ Արտախուր Խաւարտ.

Մեր հին հեթանոս վիպասանից երգերէն հանած է Խորենացի (Ա. Լ). այս
անծանօթ բանջարին անունը, որոյ նման զրոյցն ալ շատ յայտնի է. « Տենչայ
» Սաթինիկ տենչանս զԱրտախոյր հաւասար խաւարտ և զՏից խաւարծի ի բար-
» ձիցն Արգաւանոյ »։ Թէ և Լուսացեր են նոր բանասէրք պէսպէս՝ նաեւ այլան-
դակ մեկնութիւններ տալ։

239. Արտիճ.

Ըստ Ստ. Ռուբենան՝ է « Խոտ որ յարտս բուսանի »։ և վկայութիւն բերէ ի
բժշկարանէ. « Արտիճ. երեք կամ չորս հատս ի բուքն »։ և Լ. Aphaca կոչէ.
Այս բոյսս բանջարեղիաց ցեղէն և ճուլպանի տեսակներէն է. բայց նաեւ Վիգի
տեսակ մ'ալ Vicia Cracca, այսպէս կոչուի. և այս կ'երեւի Արտիճն. ասկէ տար-
բեր կարծուի

240. Արտիճուկ.

Աւելի սովորական անուն բանջարեղէնիս է Էյանկաւ, զոր տես. իսկ առջի ա-
նունն նոյնաձայն է Փ. Artichaut, և իս. Articioeco. ով, որմէ՛ առած է։

241. Արաուկն.

Բժշկարան մի յիշէ տերեւը, մինչ վերոյգրելոյն տերեւն անպիտան գուշա-
կուի: — Բրգնիքցոց բառից հաւաքողն նոյնանիչ զնէ վայրի Հառուկի:

242. Արքակաղին. Արքակաղնի.

Մանօթ ծառ, մանաւանդ պտղովն. որ է Կաղին, ուստի և ծառը Կաղինի կո-
չեն Խոտուլըրցիք. 1. Nox. Φ. Noisette. Aveline. Ար. Պոնտոք. Թ. Պրետոք.
նոյնպէս ծանօթ է Պոնտոսի կողմերն այս ծառիս յատուկ կամ հայրենիք ըլլալն.
անոր համար ի հնուց Յոյնն՝ Պոնտական ընգոյզ կոչէ, Κάρυα ποτεινά. Մեր
հին Բժշկարանն՝ կ'ըսէ. « Արքակաղին ծանր և չոր է քան զԼնգոյզ, և այլ շատ
» կերակրէ քան զԼնգոյզ. և ընկուզի ձէթ լաւ է քան զկաղնի. բայց Կաղին լաւ
» է քան զԼնգոյզ »: Իսկ մեր բնիկ Պոնտոսի երկրցին, Ամիրտ. նախ կ'իմացընէ,
որ « Պնդուխ երկու ազգ է, մէկն վայրի և մէկն Տեղացի. աղէկն քաղցին է, և
» կեղեւն նար. բնութիւնն տաք է և գէլ »: Եւ դարձեալ գրէ. « Պնտուխ, որ
» է Ֆնտուխն, որ Հ. Կաղին կ'ասեն. լաւն այն է որ մեծ լինի և քաղցր լինի,
» և տաքութիւն ունի միջակ և ինքն զիրացընող է, յորժամ մանր և կանաչ լինի՝
» ծեծեն և մեղրով խառնեն և յաշքն քաղեն, զգաֆրան տանի, որ է ըղունկն.
» և թէ ուտեն՝ զըղեղն յաւելցընէ. և իր կեղեւն կապող է », և այլն, — Վաս-
տակոց գիրքն Արքակաղնոյն տնկելու կերպը կու գրէ (գլ. ՄԼԸ) այսպէս. « Իւր
» ցանեղն՝ զերգ այլոց (ծառոց) է. բայց ինքն զսպիտակ հողն և զկակուղն և
» զշատ ջուրն սիրէ. և իւր տնկելոյն նշանն (կերպն) է, որ արձակ փոս առնես
» և պարան (երկար կարգաւ). և զքերուիկ ճիւղն չաշեր առնես և չորջանակի
» փոսերոյն չարես, և ապա զհողն ի վերայ ածես. և փոս թող, որ ջուրն ի ներք
» հանգչի. և այսպէս արա զամէն դրախտն ի պարան. զի ինքն ծառ չսիրէ լի-
» նել՝ քան թուի բազմածիւղ »:

Իսկ մեր մեծ առականսն (Մ. Գոշ) զԱրքակաղնին՝ Վայրի Կաղնի ծառոյ
հետ համեմատելով, այս ետքինս ներկայացընէ հպարտ իր մեծութեան համար.
« Իսկ Արքայկաղնի ոչ ժուժեալ՝ յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ...
» (զի ծառք) ի պտղոյ առաւել քան ի հասակէ գովեալք (լինին). զի՛ այդպէս
» յանդգնիս. ես և ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպտուղ իմ ուտելով՝ և զիս
» եւս յարգեն. այլ պտուղ քո ի դարման կայ խոզից »:

Յետևառաջութեամբ բարդեալ բառիցն՝ կ'ըսուի և Կաղին աղքայական ինչպէս
քարոզարան մի գրէ. « Տէրն պտուղ խնդրէ. ոչ եթէ Նուշ և Թուզ և կամ Կա-
» ղին արքայական, այլ պտուղ պահոց, պտուղ աղօթից », և այլն:

243. Արքայամաղիկ.

Նոյն առականսն վարդապետն յիշէ զայս այլ՝ Կակալի և նման դաշտական
կամ ընտանի ծաղկանց ցեղակից, զորս պաշտպանեց ծաղկանց Թագաւորն՝ լեռ-
նականաց մեղադրանքէն, ինչպէս յիշեցինք յԱպուղանն: Անունէն գուշակուի
որ զեղեցիկ և մեր երկրին մէջ հասարակ կամ ծանօթ ծաղիկ մ'է, բայց Թե-
րևս հիմայ ուրիշ անուամբ կոչուի, և այս հին անուամբ անծանօթ մնայ:

244. Արքայամոր.

Մորենայ տեսակ մի յայտնէ անունն. հաւանօրէն Փ. Framboise կոչածն է, *L. Rubus idaeus*. Թ. Զմատա, որ Դժնկաց ցեղէն է, բայց պտուղն և անոր շլարակն քաղցրիկ և զովարար:

245. Արքայեակ. Արքայիկ.

Հին բժշկարանն գրէ. « Խոտ մի Արքայիկ ասեն. ծաղիկն դեղին է, տերեւն » որպէս Խոշորինակ? և տակն՝ որպէս Սունկն »: Իբրեւ ականատես ճանչցող մէկ մի գրէ մեզ, թէ ծաղիկն եռագոյն է, կարմիր, ճերմակ և սեւուկ: — Սիմ. Կմբկպ. « Արքայեկ. Պ. Ար. Շէվքեր. Ինքն խոտ մի է. ջուրն կու հանեն, Շէվքեր սուրի կ'ասեն »:

246. Արքայորդի?

Եթէ նորահնար չէ, վասն զի ի լոյս է, և զուգուած Թ. Թաճ լիլիկի ծաղկին:

247. Արօսախոտ.

Վայրի կամ ածուց խոտ կարծուի, զոր հին Բժշկարանն յիշէ, և կաթով ե. փեղով դեղ կու տայ սընգան և ուրիշ հիւանդութեանց: Պուցէ ըլլայ նոյնն՝ որ Պ. և Թ. անուամբ Արտաշատ կոչուի հիմայ այլ, ըստ նոր ծանուցողի, և է Պ. Արտապոռնիս, Թ. Կէլին օրոշ կամ Էլենի կէլին օրոշ (Հարսնխոտ), իբրեւ հարսանց ուտելի, զոր գաւառականք կոչեն եւս Հարսին Արոշս*:

248. Արօսի.

Հազորանի ծառի և պտղոյ տեսակ մի կամ նոյնանիշ անուն: Տես զայն ի կարգին:

249. Աւգերծաղիկ.

Առուեղին հետ յիշեցինք Սալաձորեցոյն երգով, որ անոր և Մամխոպոպի հետ յիշէ. ծանօթ է և յարեւելակողմանս մեր երկրին, որպէս յիշէ Մշակ (ԺԸ, 88):

250. Աւելախոտ.

Ընդհանուր անուն այն տեսակ խոտերու՝ ուսելից աւել կու չինուի:

251. Աւելուկ.

Գալիենոսի բառից մէջ սա զուգած է Դափաթին, այսինքն Հապարոն, *Λάπαθον*,

* Այս անունս նաբեհելով բուսաբէտ Թուրքի մի (Գլխաթալ Ամէտ էֆէնտի) տուաւ դեղին ու կարմրուկ մաշկով պտուղ մի, որ էր Գալորուկ Փ. Coqueret.

անուան, յորմէ Լ. *Lapathum*, բայց բուն Լ. է *Rumex*, փ. *Oseille*. Իսկ մեր լեզուի մէջ կայ ուրիշ անուն մ'ալ պէտքէ՝ այլապէս, Թրսկիչ, Թրսկիմ, Թրսկիչուկ, Թրսկիմ, որ սովորաբար վայրի Ունչուկ համարուի. Ամիրտովաթ Աւելուկ չի յիշեր, այլ արաբերէն Հոնազ բառին ներքեւ կու ստորագրէ. « Հումազ, որ Հ. Թրս. քալիկի տէ, որ է Փառնադանկի (փոխանակ ըսելու Փառնականջ, վասն այն է որ) » և Թ. Ղուգի դոշադի ասէ. « ածուց լինի և ի լերունքն այլ լինի. լասն այն է որ » « ածուենիքն լինի... Թէ գիր տերեւն յայն խոցին վերայ գնեն որ յակնջթուքն » լինի՝ օգտէ. և իր հունդն օգտէ արեան թքնելուն... Եւ ցեղ մի այլ կու լինի՝ » որ ի յրին մէջն կու բուսնի, և տերեւն նման է Քասնոն մասօքին տերեւին, և » ի գազաթն հոնա կու ժողովի. և Թէ եփեն և ուտեն՝ օգտէ փորոյն պնդու » Թեան և կակղացընէ, և Թէ զհունտն ծեծեն և գինով խմեն՝ զսիրտն ուրախ » առնէ և զհոգսն ի սրտէն հանէ... Սէ Գտ. Թէ ինքն շատ ցեղ է. մէկ վայրի, » մէկ Ածուց, մէկ Ջրի. և այն որ Ջրի է՝ Սքսոշաեարուն (*Oxyabathon*) կ'ա » սեն, և այն որ վայրի է՝ Ոխիս վայրի կ'ասեն, և Հոնազ ըլ-պախար կ'ասեն. » և ինքն ի լերունքն կու լինի, և ի թուլ հողի վերայ կու բուսնի, և Հոռոմն » այսոր Տատադադիոնն? կ'ասէ »: Այս խանգարեալ բառին վերջի կէսն՝ վայրի նշանակէ, առաջինն? միթէ Լապաթ *Λάπαθος* և *Τρύφων*, ձակնդեղ:

Հին Բժշկարան մեր Աւելուկի այլեւայլ օգուտները գրէ. « Աւելուկ հով ու չոր » է. եփած տուր, հանէ զխարտէշ մաղձն և հահնդէ. — Հում ծեծէ և ի վերայ » քաղցկեղի դիր. — զունդն գինով խմցո որովայնածաց և ստամոքցվաց. — Թէ » իրով զգա յառաջ խմէ, ի ժահարի օգնէ, և Թէ խայթէ՝ չահոկէ. — քաղիով » եփած՝ ի վրայ հերթունի դիր կամ բորոյ. — Թէ ըղընգունքն կուտ է, չփէ » քաղիով և բորակով, և զինքտ ի վրայ դիր. Եփէ ու ի ջուրն նստո, կամ լից » որ կիծ ուննայ. — Ակուացվու՝ ի գինի եփէ վի բերանն առնու. Թէ ի կղակ » զլուխն ելունա կամ խոզք, եփէ գինով և ի վրայ դիր. — Փայծաղնցվի՝ եփէ » քաղիով և ի վերայ դիր. — եփէ գինով և խմցո, զգոյնն սրբէ, և զքար՝ որ » ի փաղարուշտն՝ սրբէ »:

252. Էգ Աւելուկ.

Որ յոմանց գրչաց նոյն համարուի ընդ Էգ Երնջայի, որ պիտի յիշնը:

253. Աւելուկուկ.

Որ և Աւելուկի տակ, յիշուած ի բժշկարանս իբրեւ դեղ, օտար յոյն անուամբ, Գառնիդոս? խոտ, զոր օրինակող մ'ալ գրէ Գառնիդոսիսոս:

254. Աւելի Պիպի.

Անտառային բոյս մի, անունը՝ նմանութենէն առած, Տրապիզոնի կողմերը ծա-
նօթ. ուր անգղիացի գունցն՝ յամին 1883-4՝ հռչակեց իբրեւ տեսակ մի Չայ:

255. * Աւենիա?

Ըստ Ամիրա. « Խոտ-մն է որ տերեւն ի Ջրկուտիմի տերեւ կու նմանի, և շատ

» ծակտիք ունի, ասին թէ ցեցն է ծակծրկել. և Թ. այսոր ազգ մի կալընձոռն չի,
» ջակի ասեն. և թէ քամեն զլուրն՝ յաչքն կաթեցընեն՝ զաչից մթութիւնն տանի »:

356. Ավետիք կամ Աւետիկ.

Կարմիր հատով ցորենի տեսակ, « որոյ հասկերն անփուշ են », կ'ըսէ Մանա-
նայ (եր. 442):

357. Աւիւն.

Կամ տեսակ մի է կամ հոմանուն կնիւնի, Տես զայս:

358. Աւնոր.

Ընդհանուր անուն ընդեղինաց ըստ Զէյթունցոց. ինչպէս Բսողայ, Ոսպն, և այլն:

259. * Ափարբիոն, կամ Աքարբիոն.

Խանգարեալ *Euphorbia* անուն Լ. *Euphorbia*, Փ. *Euphorbe*, բուսոյ, յանուն Եւ-
փորպայ բժշկի Մարիտանիոյ Յուքաս Թագաւորին: Բժշկարանք տւելի կրճատելով
ալ գրեն. « Ֆարֆիոն, և Ֆոանկերէն Ֆարպիոն »: Ամբարովաթ արաբերէն Եւ-
թուն *عتر* բառին ներքեւ կու ստորագրէ. « Ան խոտն է որ կաթ ունի. եսթն
» ցեղ է. կաթն և հունտն և տերեւն՝ երեք տարաճան տաք և չոր է և սյրող
» է. և կաթն՝ այրած ակուան կտրատէ, և զսպին ի յերեօացն տանի... և ի ը-
» դնկան քովի զաւելի միան ուտէ, և զմորթն խոց կ'առնէ. — Ասէ Պատէհին,
» թէ ամենայն խոտն որ կաթ ունի՝ այն ի Եթիօպիոն է. որպէս Շիպրիոն
» և Յաշըն և Ըպդիան. և իր ցեղերն շատ ազգեր են և ամէնն ֆլատակար է. և ու-
» ժովն՝ կաթն է, և այլ յետեւ հունդն է, և այլ յետեւ տերեւն է. և թէ զկաթն
» որ (ի) Լուր վաթեա, որ տեղ որ ձուկ կենայ՝ ի իրն երեսն գան »:

Նոյն Ափրատ. առանձինն յիշէ և զԱփարբիոն, ոչ իրրե բոյս, այլ անոր հիւթը,
հանդերձ Լ. Ֆարպիոն և Ափարպիոն անուամբք. « Եւ ինքն ի Սնծրութ կու նը-
» մանի. խէժ-մն է, մէջն փոս և խիստ սուր է. լաւն այն է որ նոր լինի և սուր
» լինի »: Այս ալ կ'աւելցընէ մեր բազմաբերի հեղինակն, թէ « Ի յայլ գիրք զը-
» տայ որ Ճոնստոպատապարն է », կամ Ճոնկոտապատա, այսինքն Ճոնտ-սրա-
տեպեր *جندل*, որ բուրբուրն տարբեր բան է, և ինչպէս ինքն իսկ գրէ
այս անուան տակ, Կղբու ձուռն է, որ է Ղոնտոզը հայաստան — Դարձեալ գրէ.
« Ինքն խէժ է գեղնար, և փշեր ունի, աղէկն նորն է և ուժով »: — Ափար-
բիոնի հարիւրաւոր տեսակք կան, ի Հայաստան ալ գտուին շատ, և հարկ է որ
բնիկ հայերէն անուն ալ ունենայ ազգն կամ ոմանք ի տեսակաց, որոց մէջ բու-
սարանից կոչած մէկն այլ է Հայկական, *E. Armeniaca*. — *E. Gerardiana* ի Վան-
ձակ. — *E. Marschalliana*, յԱզդոր, Վան. — *E. Denticulata* ի Իմանա. — *E.*
Bothriosperma (Խորասերմ) ի Մուշ, Կիւմկիւմ, — *E. Rumicifolia* ի Մուկու —
Մեծածաղիկն *E. Megalantha* յԵրեւան. — *E. Wittmanni* յԱզդոր. — *E. Eriophora*
(Արարբեր) ի Թ-Հ.* — *E. Subtuberculata* ի Հեր. — *E. Orientalis* ի Մուկու.

* Կարգա թուրքաւայք, Թուրքոյ Հայաստան, ինչպէս Ու-Հ. Ռուսաւայք:

Խօշատէրէ. — E. Macrocarpa, E. Condyllocarpa, E. Szovitsi, E. Arvalis E. Petrophila, E. Virgata, E. Iberica, E. Glareosa, E. Tinctoria, յայլեւայլ կողմանս:

260. Ափիոն.

Դրանօթ այս անուամբ՝ յարեւելս Աֆիոն, յարեմուտս Opium, ոչ բոյս, այլ հիւթ բուսոյ Մեկոնին որ և Խաշիաշ. այս ետքի անուամբ յիշեմք մենք ալ բոյսը. իսկ այս տեղ քիչ մի մեր բժշկապետի հիւթին համար ըսածէն. « Աֆիոն, որ է դա, » ըսր և սեւ Խաշիաշին և Հագրին խէժն և կաթն. երկու ազգ կու լինի. լաւն » այն է որ խիստ լեղի և հոտն սուր լինի... Իպն (Պէյթար) ասէ, թէ ինքն » դալար Խաշիաշին կաթն է. և թէ ի տաք ջուրն ձգեն՝ շուտ տրորի. և թէ յա » րեւն դնես՝ շուտ կակղանայ. և այն որ սուգծու է՝ զլուրն դեղին կ'առնէ, և » խոշոր լինի որպէս մուսիս. — Եւ ասեր են. թէ Վայրի Հագրին կաթն է. և » այն որ փայլուն է՝ խէժն է... Աղէկն ի Մօրայ գայ... Ասէ Պա. թէ յորժամ » ուղեւաս որ ի ծառէն քաղես, պիտի որ զբերանն ամուր կապէ և փակէ մարդ, » որ փոշին ի բերանն չմտնու. թէ մտնու՝ զակւանին կու վաթէ իր փոշին զա » մէնն. և յորժամ զինքն ժողովեն՝ կու պիտի որ կտուած Բակլայ խառնեն ի » մէջն. որ ուժն յիսփամի » — Դատ տեսակ օգուտներն և ֆեւաններն յիշելով կ'աւելցընէ գրողն. « Աստուած օրհնէ զայն մարդն՝ որ զԱֆիոն ուտելն իր գործ » չանէ »: — Տես և Խաղպատ:

261. Ափնիք.

Արաբ բառէն առնուած, որ է ֆեֆի-ատամ, Աղամայ կամ մարդոյ ձեռք. Խոտ-մն է կ'ըսէ Ամիրտովաթ, որոյ ուժն կամազգեցութիւնն նման է ֆաֆ ըլ-Հարիթին օգտութեան և զօրութեան. ետքինս Կատուածանկն է, զոր դանես ի կարգին: Պէյթար կ'աւելցընէ որ բոյսն կանգնաշափ մի բարձր է, տրեւաններն Մրտեւայ նման, վերի ծայրերնին քիչ մի կ'լոր. արմատն կամ տակն կէս դեղին կէս սեւ գունով, ներսի գին կարմիր: Թարգմանիչն (Leclerc) անժանօթ բոյս մի համարի. բայց հաւանօրէն է Լ. Symphytum, Փ. Consoude, և Հ. Դամիտակ, կամ Ծործորակ. Տես:

262. Ափրիանաս.

Անժանօթ և ստուգելի « Խոտ մի, ըստ բժշկարանի. որ ի չարեայ կամ ի ջատ » կաց (կախարդ կ'ըն) աչ լինի, դնա հանէ և առ իւրն պահէ, չկարէ ոք ինչ » առնել: Դժանն այս է, բարձր է, և ծաղիկն բոլոր և խիստ կարմիր՝ քան զա » մենայն ծաղիկ. տերեւին ծայրքն սուր լինի. սերմն նման է Նաւն հատի. ի » լերինս լինի. Երբ կտրես՝ ասա, թէ, Չքեղ վասն այս իրացս հատանեմ »:

263. Աքալ.

Ամիրտ. Ազգայինաս անուան տակ կու գրէ. « Որ է Աքալ. Իպն (Պէյթար) ասէ, » թէ ինքն Խոտ-մն է որ երկու ցեղ կու լինայ. և ինքն ի ջրեղերնին կու բուս » նի. և մէկն պտուղ չունի, և մէկն սեւ բոլորեկն պտուղ ունի. և թէ այն

» պտղէն գինով խմես՝ զփորն կապէ.. և թէ զտերեւն սպեղանի առնես և ի վե-
 » րայ օձահարին դնես, օգտէ. բայց (թէ) զայն պտուղն ի կրակն տապկես և
 » ապա խմես, օգտէ »: — Երկու անուններն ալ չի գտայ Պէյթարայ մէջ. առա-
 ջինն յունաձայն է, որոյ նման կան Ascalea և Ascalia բոյք՝ Կանգառի և Կառին
 ցեղէն. կայ և Ascalonia, որ Ասկաղոնի Սխտոր նշանակէ. բայց և ոչ մէկն Ա-
 միրատուլութայ ըսածին յարմարին: — Մանթազոյն է Ասկիպիասն Գ. Ἀσκληπιός,
 Լ. Aesclepias. Աբ. اسقليبياس, որոյ յատուկ Հ. անունն ինձ յայտնի չէ. և
 մեծ ցեղ մ'է բուսոց, աւելի տաք երկիրներու, այլեւայլ ազգ բաժնուած. յորոց՝
 Թունաթափ՝ Vicetoxicum ազգի ճերմակ անտակն (Canescens) տեսնուած է ի
 Մանախ, յՈւռհա. Սեւ տեսակն V. Nigrum ի Հս. և Հր. Կովկաս, Ճիմիլ լեռ. —
 Տմուխան կոչուածն V. Tmoleus ի Բաբերդ, ի կողմանս Մոկաց. — As. Cyanchum
 ազգէն՝ (Սուր Acutum կոչուածն՝ յԱմիդ, Խարբերդ:

264. Աքաղաղի խոտ.

Բժշկարան մի յիշէ, բայց չի բացատրեր, գուցէ ըլլայ Ալուրուկն:

265. * Աքիլիւէիք կամ Իքլ-մէլիք.

Արարերէն նշանակէ Թագաւորի պսակ, և ըստ այսմ կոչած է Ասար բժիշկն
 Թագաւորապսակ, ուր և յիշեմք, նաեւ ուրիշ անուն ալ. բայց այս արաբացի ա-
 նունն յարեւելս հասարակաց ըլլալով և ի մեր բժշկական գիր, հարկ համարե-
 ցանք յիշել և այս տեղ:

266. Աքլոր-կոտոր.

Ըստ Շէհրիմանի սա է Բունաց և Լատինաց Oxyris կոչած բոյսն, զոր նոյն-
 պէս կոչէ և Պէյթար اسجرجا, և սեւադոյն բոյս մ'է կ'ըսէ, բարակ բայց դը-
 ժար կոտորուող ճիւղերով, զոր կրակ վառելու գործածեն, տերեւներն ալ նման
 Կանեփոյ, նախ սեւ յետոյ կարմրին. համն լեղի և բացողական (aperitive),
 Ինչ նմանութիւն ունի աքլորի կոտորի կամ գազաթան. — տեսնողն ստուգէ:

267. Աքլորուկ կա' Աքլորիկ.

Որ և Կարնքանջար կոչուի, և գտուի մեր երկրին, այլեւայլ կողմերում ի Շի-
 րակ, Լօռի, Վան. գարնան կու բուսնի և կ'ածի. կարճ բոյս մ'է, զոր Թթուե-
 ցընելով կու պահեն ի պաշար ձմեռուան և պահոց:

268. * Աքսար.

Աքրոցար ըստ Աբ. اكسار « Որ է Խլալ (ըստ Թուրքաց). ինքն խոտ-մն է՝
 » որ իր տերեւն նման է Ստեպղնին տերեւին, և ինքն մէկ մէկ կու բուսնի,
 » և յերկանքն երկու թիզ կու լինի, և գազաթն Սամթի գազաթ կու նմանի.
 » Բայց ծաղիկն սպիտակ է և տակն բոյր քան ընկզի մի չափ. և թէ ի քսէն
 » հաց առնեն և ուտեն՝ քնացընէ: Եւ ինքն լինի ի ցանի տեղերն և արտերն և

» ի լերունքն. և ինքն տաք է և չոր է, և իր անունն Թ. Խաչալ ասեն, Ով որ
» յամէն վաղվընէ մինչեւ տասնուհինգ օր ամէն օր զստոր հունդն երկու մթնալ
» ուտէ և Տատալի ջուր իմէ ի վերայ, հալէ զան քարն որ երկամն լինայ »:

Աս բոյսս բուսարանից տարակուսի և վիճի առիթ եղած էր, հիմայ հաւանին
թէ ըլլայ կոշուածն Bunium Bulbocestanum. Փ. Noix de terre, որ նշանակէ
դեռնի լնկոյզ, Ամիրտովմայ ստորագրածին ալ յարմար: Պէշթար ուրիշ շատ
անուններ ալ յիշէ Աքսարայ՝ Արորոց և Ալորիկէի պլեւայլ կողմանց մէջ ըլ-
լուած: — Հաւանօրէն այս է և Հ. Գետնիպրտոյ և Գետնի աղիք կոշուածն, այլ
և Երկրմայր, զորս տես ի կարգին:

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՑ

(Տես յ'էջ 462)

ԺԲ

Մեկնումն ի Կիրոսն: — Ագսոս և Գարտաշ կիրճը: — Ակնարի մը
Կիրոսսի հովտին հրաշալի տեսարանին վրայ: — Թափառական ցեղե-
րոս խմբովին լուս ի շերինս: — Ֆարա-ալի շափարը:

Մայիս 21. Պայծառ արեգական ճառագայթը մեր վրանէն ներս մտնե-
լով, կը հրախրէ զմեզ օդոյն գեղեցկութենէն օգտուելով՝ ճամբայ ելլել.
և մինչ ծառայք վրաններն կը ծալլեն և բեռները կը կապեն, վրայ կը
հասնին բազմաթիւ հիւանդք, և ամուսինս բժիշկ կարծելով՝ իրեն խորհուրդ
կը հարցընեն: Իսկ երբ ամենայն կազմ է ու պատրաստ, և կարաւանը
արդէն ճամբայ ելած, կ'աշտանակենք յերիվար, երկու ձիաւոր մեզի առաջ-
նորդ ունենալով որ մեզի պիտի առաջնորդեն այնպիսի ուղեաց մէջ որ յա-
ճախ հեղեղատից անկողինք են: Շարք մի գերեզմանական հողաբլուրներէ
անցնելէն ետքը որ 1600 մետր բարձրութիւն ունին ծովուն երեսէն, կա-
րաւանը կանկ կ'առնու ի ձորն Քարաշէնի, որոյ վտակաց ջուրք կրային են:
Ծառք սակաւթիւ, կաղամախիք կը սկսին երևնալ:

Հրաբխային յեղափոխութեամբ ձևացած հողոց ընկարձակութեան մէջ
կը բլրին ընտիր ակունք ջրոց, յորոց և գետն Ագսոս, որոյ հովիտը կը մշա-
նեմք: Խոխտ աղէկ կերպով մշակուած և բազմարգաւանդ է այս հովիտ. ար-
մաթի, թթենիք, ուռենիք և դեղձենի հսն կ'աճին ու կը պտղաբերեն սուս-
տաբար: 1710 մետր անոյին, և ահա կը ժամանեմք ի Գարտաշ կիրճ, ուր
կը տեսնենք տեղէն փոխապրուած հոյակապ ժայռի կտոր մը: Կիրճէն անոյին կը